Կար եւ մի ուրիշ բան: Մեր գաւառում բնակողզանազան մահմեդական ցեղերը, մանաւանդ քրդերը, անհաստատաբնակ ժողովուրդ էին. գարնան սկզբից սկսած մինչեւ աշնան վերջը իրանց հոտերով եւ վրաններով թափառում էին լեռնային ամարանոցներում, եւ ձմեռը միայն վերադառնում էին իրանց տները: Թափառումների ժամանակ ամէն մի խումբ պէտք է իր հետ զինագործ ունենար, որովհետեւ զէնքը նրանց ամենահարկաւոր գործիքն էր: Եւ այս մտքով ման էին ածում իրանց հետ զինագործի շարժական արհեստանոցնէր: Իմ մեծ քեռու հինգ որդիներից չորսը մի քուրդ ցեղի վարպետներն էին եւ իրանց աշակերտներով շրջում էին նրանց հետ: Նրանք վերադառնում էին տուն ձմեռը, բերելով իրանց հետ բեռներով իւղ, պանիր, բուրդ եւ մեծաքանակութեամբ ոչխարներ, կովեր, եզներ եւ այլն: Քրդերը վճարում էին այն մթերքներով, որ ստանում էին իրանց անասուններից:

Միւս որդիների բացակայութեան ժամանակ մեծ քեռուս մօտ մնում էր միայն կրտսեր որդին: Ես, կարծես, հէնց այս րոպէիս տեսնում եմ իմ աչքի առջեւ ծերունի արհեստաւորին, նստած զնդանի առջեւ, կաշեայ գոգնոցով, անդադար ուղղում էր քթի վրայ դրած ահագին ակնոցները, եւ երկաթի կտորը ունելիքով բռնած, կամ խառտում է, կամ յղկում է եւ կամ փոքրիկ մուրճով ծեծում է: Նրա շուրջը լսելի են լինում ահագին կռանների դաշնակաւոր ձայները. փուքսերը գոռում են, շիկացրած երկաթը դուրս են բերում քուրայի միջից, դնում են զնդանի վրայ եւ մեծ-մեծ կռաններով կռում են – իւրաքանչիւր հարուածի հետ դուրս է ցայտում կայծերի մի ամբողջ հեղեղ: Չգիտեմ թէ ինչո՞ւ այդ կայծերը իմ ամենափոքր հասակից միշտ մի առանձին կախարդական ազդեցութիւն ունէին իմ վրայ. ես տեսնում էի նրանց մէջ մի անբացատրելի խորհուրդ, մի գաղտնիք, որը հասկանալ չէի կարող: Երկաթի մէջ թաքնուած կայծերը դուրս էին ցայտում այն ժամանակ միայն, երբ սառն երկաթը սաստիկ ջերմացնում էին, եւ երբ սկսում էին ծեծել, հարուածել նրան: Երկաթի հանգիստ եւ խաղաղ դրութեան ժամանակ կայծերը, կարծես, քնած էին լինում. հէնց որ տաքացնում էին երկաթը, հէնց որ զարկում էր առաջին կռանը, իսկոյն շանթերի կոտորակների նման նրանք դուրս էին ցայտում եւ սփռւում էին դէպի ամէն կողմեր... Ուրիշ երեխաներ կարող էին վախենալ, բայց ես միշտ մի առանձին զուարճութեամբ էի նայում այդ հրեղէն տարափի վրայ: Ես մինչեւ անգամ սիրում էի մրրիկը, երբ երկինքը սարսափելի կերպով որոտում էր, երբ օդի մէջ տիրում էր մի սոսկալի ալեկոծութիւն եւ երբ կայծակը դուրս էր շողում մթին ամպերի միջից: Ինձ երեւում էր, թէ այնտեղ, երկնքի բարձրութեան մէջ, կատարւում է մի սաստիկ պատերազմ. հսկաները ահագին կռաններով փշրում էին ամպերը, ես լսում էի նրանց հարուածների ձայնը